CALIFORNIA DEPARTMENT OF
HEALTH CARE SERVICES
Michelle Baass | Director

Medi-Cal-ն այլևս հաշվի չի առնելու ձեր սեփականությունը:

«Medi-Cal»-ի հարգելի դիմորդ,

Կարևոր նորություն: **2024** թվականի **հունվարի 1**-ից, Medi-Cal-ին իրավասու լինելու համար, California նոր օրենքը կդադարեցնի սեփականության հաշվառումը, ինչպիսիք են՝ բանկային հաշիվները, մեքենաները և գումարները:

Եկամուտները և գույքից ստացվող եկամուտներն, ինչպիսիք են վարձակալությունից ստացված եկամուտները, փոխառություններից ստացված տոկոսավճարները և բաժնետոմսերից ստացված շահաբաժինները, դեռևս հաշվարկվում են: Օրենքը վերաբերում է նաև Medicare Savings Program-ին:

Եթե 2023 թվականի դեկտեմբերին դուք դիմել եք և մերժվել Medi-Cal-ի կամ Medicare Savings Program-ի համար՝ ձեր սեփականության պատճառով, ապա ձեր վարչաշրջանը կորոշի, արդյոք դուք՝ համաձայն նոր օրենքի, իրավասու եք Medi-Cal-ին 2024 թվականին: Հունվարին կամ փետրվարին նրանք ձեզ նամակ կուղարկեն իրենց որոշման վերաբերյալ:

Եթե 2023 թվականի հունիսի 1-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում դուք դիմել եք և մերժվել Medi-Cal-ի կամ Medicare Savings Program-ի համար՝ սեփականության պատճառով, ապա՝ 2024 թվականի հունվարի 1-ից կարող եք կրկին դիմել հետևյալ եղանակներից մեկով.

- **Առցանց**. Դիմել առցանց՝ BenefitsCal կայքի միջոցով՝ https://benefitscal.com/:
- **Նամակով**. Տպել և փոստով ուղարկել դիմումը ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակ: Դուք կարող եք գտնել ձեր վարչաշրջանի հասցեն և հեռախոսահամարն այս նամակի հետ բերված ցանկում: Կարող եք նաև խնդրել ձեր վարչաշրջանին ուղարկել ձեզ թղթային դիմում:
- **Անձամբ այցելելով կամ հեռախոսով.** Գնացեք կամ զանգահարեք Ձեր շրջանային տեղական գրասենյակ: Դուք կարող եք գտնել ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակը այստեղ՝ https://www.dhcs.ca.gov/COL:

Հարցերի դեպքում?

Եթե ունեք հարցեր կամ օգնության կարիք, զանգահարե՛ք ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակ: «Medi-Cal»-ի ընդհանուր հարցերով զանգահարեք «Medi-Cal»-ի Օգնության գծին՝ 1-800-541-5555 համարով:

Շնորհակալություն,

Department of Health Care Services
California նահանգ